



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր

07/02/2023

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2  
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Հովիկ Գոգոյանը, Նարեկ Հարությունյանը, Գոհար Հովհաննիսյանը, Ռուզաննա Պետրոսյանը, Նունիկ Ստեփանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ոսկան Եղիազարյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղայանը**

Լսեցին

**ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 07-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Ձեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի 2023 թվականի փետրվարի 07-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը հաստատելու մասին:
2. Հայաստանյայց առաքելական Սուրբ եկեղեցու Կոտայքի թեմի սոցիալական ֆոնդին դրամական աջակցություն ցուցաբերելու մասին:
3. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 191 որոշման 1-ին կետը ուժը կորցրած ճանաչելու մասին:
4. Ծաղկաձոր համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

5. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

6. Հողամասի գործառնական և նպատակային նշանակությունը փոխելու մասին:

7. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 209 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

8. Ծաղկաձոր համայնքի տեղական սոցիալական ծրագիրը հաստատելու մասին:

9. Դրամական աջակցություն տրամադրելու մասին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10/

Լսեցին

**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկի հիմնական միջոցները և պաշարները Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցելու ակտը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱՐԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի գրությունը՝ ավագանին որոշում է.

1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի սոցիալակն ֆոնդին ցուցաբերել դրամական աջակցություն՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով, մարզի խիստ կարիքավոր ընտանիքներին օգնություն ցուցաբերելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12/

Լսեցին

**ԾԱՂԿԱԾՈՐ ՀԱՄԱՅՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 191 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԹԻՎ 1-ԻՆ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ./*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 14-ի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 191 որոշման հավելվածի 1-ին կետը:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13/

Լսեցին

**ԾԱՂԿԱԾՈՐ ՀԱՄԱՅՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ավագանին որոշում է.

1. Համայնքի կարիքների համար աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Աճուրդը կազմակերպել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14/

Լսեցին

**ԾԱՂԿԱԾՈՐ ՀԱՄԱՅՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՐԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-

ին կետի 1-ին, 6-րդ, 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Սամսոն Արտաշեսի Գրիգորյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1. Սամսոն Արտաշեսի Գրիգորյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրենց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 102 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0020-0049/ 0.05 հա մակերեսով հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասին կից՝ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 100/1 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0020-0152/ 0.02454 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 3 969 738 (երեք միլիոն ինը հարյուր վաթսուինը հազար յոթ հարյուր երեսուն ութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15/

Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14.3 հոդվածով և հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 30-ի Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 1918-Ն որոշումը և Էրիկ Արմենի Խաչատրյանի լիազոր ներկայացուցիչ Գայանե Հմայակի Եղիազարյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1. Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձորում գտնվող Էրիկ Արմենի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր 07-005-0020-0017) 0,14 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադարյից փոխել և պատկերել որպես հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողամաս:

2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակության փոփոխության դեպքում անհրաժեշտ է վճարել հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16/

Լսեցին

**ՇԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 209 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 29 հրամանը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 109 որոշման թիվ 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մարտի 01-ից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17/

Լսեցին

**ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

Հաստատել Ծաղկաձոր համայնքի տեական սոցիալական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18/

Լսեցին

**ԴՐԱՄԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և Հեղնար Սուքիասյանի կողմից ներկայացված դիմումը և փաստաթղթերը՝ ավագանին որոշում է.

Հեղնար Միշայի Սուքիասյանին տրամադրել դրամական աջակցություն՝ 200 000 /երկու հարյուր / Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ իր հայրիկի՝ Միշա Հրաչիկի Սուքիասյանի շարունակական բուժման և առողջական խնդիրները լուծելու համար:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼՈՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղայանը